

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4**

2013 թ. նոյեմբերի 16-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտական խորհրդի 35 անդամներից 27-ը:

**Օրակարգ`**

1.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2013թ. ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2014թ. ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը:

/զեկ` պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

2.ԳՊՀ 2012-2013 ուսումնական տարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվությունը և 2013-2014 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը:

/զեկ` պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

3.ԳՊՀ 2012-2013 ուսումնական տարվա տնտեսատեխնիկական գործունեության հաշվետվությունը և 2013-2014 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը:

/զեկ` պրոռեկտոր Ա.Ապրոյան/

**4.Ընթացիկ հարցեր:**

Հեռակա ուսուցման ֆակուլտետի մեկ տարվա գործունեության հաշվետվությամբ հանդես եկավ ուսումնագիտական աշխատանքների զծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանը: Խոսելով հեռակա ուսուցման առանձնահատկությունների և դժվարությունների մասին` զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետում կատարված աշխատանքները, ուսումնառության ընթացքը, առաջադիմությունն ըստ բաժինների և կուրսերի, առաջին և երկրորդ կիսամյակների համեմատական վերլուծությունը: Նա նաև մեկնաբանեց ուսանողական հարցման արդյունքները, որը նպատակ է հետապնդում բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Հեռակա ֆակուլտետի համար միշտ էլ խնդիր է եղել քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցի հարցը:

2013 թ. ամառային քննաշրջանն առաջին կուրսեցիների համար անցկացվեց սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Սա նոր մոտեցում է, որը թույլ կտա ուսանողներին լավ պատրաստվել քննություններին: Ն Կուտուզյանը նշեց, որ նոր ուսումնական տարվա զարգացման հայեցակարգով նախատեսվում է ճիշտ և արդյունավետ օգտագործել ժամանակը, դրսևորել ճկունություն, ուշադրություն դարձնել էլեկտրոնային ուսուցմանը, նախօրոք նախապատրաստել դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները: Ուշադրությունից դուրս չմնացին կարգապահական հարցերը:

Տիկին Կուտուզյանը ներկայացրեց նաև համալսարանի ուսումնագիտական գործունեության հաշվետվությունը և զարգացման հեռանկարները: 2012-2013 ուսումնական տարում ուսումնական գործընթացը կազմակերպվել և անցկացվել է ըստ սահմանված ժամանակացույցի: Այս առումով լավ են աշխատել համապատասխան ստորաբաժանումները /դեկանատներ, ամբիոններ և այլն/, իրականացվել են միջոցառումներ, հանդիպումներ, ամրապնդվել է կապը ավագ և միջնակարգ դպրոցների հետ, որոնցից մի քանիսի հետ կնքվել են համագործակցության հուշագրեր /Վարդենիկի ավագ դպրոց, Ակունքի միջնակարգ դպրոց, Ծաղկունքի բաց դպրոց/: Ապահովվել է հետադարձ կապը ուսանողների, նրանց ծնողների հետ: Կարևոր իրադարձություններ էին ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի կիսանդրու բացումը, ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանին Ֆրիտյոֆ Նանսենի անվան մեդալով պարգևատրելը: Համալսարանը ձեռքբերումներ ունի նաև գիտահետազոտական աշխատանքների ոլորտում: Կազմակերպվել է ամենամյա գիտաժողով, որի նյութերը տպագրվում են համալսարանի գիտական հոդվածների ժողովածուի հերթական՝ 15-րդ համարում, լույս են տեսել ուսումնամեթոդական ձեռնարկներ, մենագրություններ: Համալսարանի դասախոսներ Ա. Խաչատրյանը, Ն. Ղազարյանը ստացել են դոցենտի գիտական կոչում: 2013-2014 ուսումնական տարվա հայեցակարգով նախատեսվում է զարգացնել հաջողությունները և վերացնել նկատվող թերությունները:

ԳՊՀ պրոռեկտոր Ա. Ապրոյանը ներկայացրեց 2012-2013 ուսումնական տարվա տնտեսա-տեխնիկական գործունեության հաշվետվությունը: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են համալսարանի տնտեսական գործունեության տարեկան պլանով նախատեսված միջոցառումները: Բարելավվել է համալսարանի նյութատեխնիկական բազան, բարձրացվել են տնտեսատեխնիկական անձնակազմի աշխատավարձերը, վերանորոգվել են շենքերն ու շինությունները, բոլոր մասնաշենքերում փոխվել են պատուհանները, կատարվել են ներքին հարդարման աշխատանքներ, վերանորոգվել է ջեռուցման համակարգը և այլն: 2013-2014 ուսումնական տարում նախատեսվում են մի շարք տնտեսատեխնիկական աշխատանքներ, որոնք կբարելավեն համալսարանի

նյութատեխնիկական բազան, կստեղծեն ուսումնառության համար նպաստավոր պայմաններ: Ա. Ապրոյանը ներկայացրեց նաև իրավաբանական կլինիկայի գործունեության հաշվետվությունը:

Ընթացիկ հարցերի շարքում կարևորվեցին հեռակա ուսուցման ֆակուլտետում կրթության որակի հետ կապված հարցերը, առաջին կուրսեցիների հետ նախատեսված հանդիպումը, գնումների տարեկան պահանջագրերի ներկայացման հարցը և այլն:

Քննարկվեց Ա. Ղարազյոզյանի <<Հայոց պատմության հիմնահարցեր>> աշխատությունը տպագրության երաշխավորելու հարցը:

Հիմք ընդունելով զեկուցումները՝

Որոշեցին՝

1.Ն Կուսուցյանի հաշվետվությունը հեռակա ուսուցման ֆակուլտետի 2013թ. գործունեության վերաբերյալ ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Ն.Կուսուցյանի հաշվետվությունը ԳՊՀ 2012-2013 ուսումնական տարվա ուսումնագիտական գործունեության վերաբերյալ ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3.Ա.Ապրոյանի հաշվետվությունն ԳՊՀ 2012-2013 ուսումնական տարվա տնտեսատեխնիկական գործունեության վերաբերյալ ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4.Ա.Ղարազյոզյանի <<Հայոց պատմության հիմնահարցեր>> աշխատությունը երաշխավորել տպագրության:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան